«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - Սովորողների արժեհամակարգի ձևավորումը օտար լեզվի դասերին

ԱՌԱՐԿԱ- Գերմաներեն

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ- Նիկողոսյան Աննա

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ-Ջուլիետա Հակոբյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ- Սևանի Յա. Զարոբյանի անվան N2 հիմնական դպրոց

Սևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……...1
Գլուխ1.Արժեհամակարգի ձևավորման կարևորությունը…….2
Գլուխ 2.«Արժեք» հասկացության մեկնաբանությունը……....3
Գլուխ 3.Արժեհամակարգի ձևավորումը օտար լեզվի դասերին…...9
Գլուխ 4.Օտար լեզուների դասավանդման արժեքային համակարգը……..12
Գլուխ 5.Ժամանակակից ուսուցչի անձի ձևավորումը……14
Եզրակացություն……...18
Օգտագործված գրականության ցանկ……19

Ներածություն

Ամբողջ կրթական համակարգը մարդու գոյության պահպանման երաշխիքն է, քանի որ նրա միջոցով է իրականացվում մարդկային որակների, գիտելիքների, արժեքների, ընդհանրապես մշակույթի՝ սերնդից սերունդ փոխանցման, վերարտադրման օբյեկտիվ գործընթացը:

Կրթությունը պետք է լինի կառավարվող առաջընթաց համակարգ, որը պետք է կանխատեսի և բավարարի ապագա քաղաքակիրթ հասարակության պահանջմունքները:

Կրթության գլխավոր նպատակը ոչ միայն սովորողներին գիտելիք տալն է, այլև՝ նրանց մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումն է, պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը:

Կրթության հիմնական գործառույթը աճող սերնդին հոգևոր, բարոյական, մշակութային այն արժեքների փոխանցումն է, որոնք կուտակվել են նախորդ սերունդների կողմից:

Ժամանակակից մանկավարժության կարևորագույն խնդիրներից է սովորողների արժեքային համակարգի ձևավորումը: Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է:

Արժեքային համակարգի ձևավորումը երկարատև գործընթաց է:

Գլուխ 1.Արժեհամակարգի ձևավորման կարևորությունը

21-րդ դարը, մեր օրերի հասարակությունը կրթությունից պահանջում է կերտել համակողմանի զարգացած, լայն մտահորիզոն ունեցող դաստիարակված, բարոյապես զարգացած սերունդներ: Այդ խնդիրները կարելի է լուծել միայն բարեփոխված կրթության և ինքնակրթության՝ դրանց բոլոր աստիճաններն անցնելու, կայուն և խոր գիտելիքներ ձեռք բերելու, տեսությունն ու պրակտիկան զուգակցելու, յուրացրած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները կյանքում կիրառելու միջոցով:

Հանրակրթական համակարգի բարեփոխումների ոլորտում կարևոր է համարվում արժեհամակարգերի ճիշտ ձևավորումն ու զարգացումը, պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը, սովորողների կողմից բնության, հասարակության, բնապահպանության, խելացի բնօգտագործման մասին գիտելիքների յուրացումը, համամարդկային և ազգային արժեքներին հաղորդակից, ազգային-մշակութային ու բարոյահոգեբանական ժառանգությունը կրող ու քաղաքացիական դիրքորոշում և էկոլոգիական մշակույթ ունեցող քաղաքացու ձևավորումը: Այսօր այդ խնդիրների իրականացումը ռազմավարական նշանակություն ունի: Շատ կարևոր է կրթության ողջ համակարգում համամարդկային, ազգային, մշակութային, հոգևոր-բարոյական արժեքների մարդասիրացման և անձնակողմնորոշիչ մոտեցման խնդիրների լուծումը: Մեզ շրջապատող իրականությունը փոխվում է զարմանալի արագությամբ, փոխվում են նաև արժեքային կողմնորոշիչները, որոնք մեծ նշանակություն ունեն սովորողների ազգային արժեհամակարգի ձևավորման ու զարգացման գործում:

Արժեքային համակարգի ձևավորումը կարևորվում է նաև այն պատճառով, որ որոշակի արժեքային համակարգի հենքի վրա կառուցված գործողությունները ճանաչելի են և հետևաբար ընդունելի, քանզի դրանք սկիզբ են առնում ազգային, համամարդկային համընդհանուր սկզբունքներից, նորմերից և օրենքներից: Այս համատեքստում աշակերտը պետք է ընդհանուր գիտելիքներ ունենա սեփական իրավունքների մասին, հարգի հասակակիցների իրավունքները՝ անկախ սեռից. լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից, սեփական եսը այլոց հետ հակադրելիս՝ գիտակցի բոլորի հավասարության սկզբունքը, հարգի յուրաքանչյուրի ազատության և անձեռնմխելիության իրավունքը, բացառի

դաժանության, նվաստացնող վերաբերմունքի ցանկացած դրսևորում, հարգի այլոց գաղտնիքները, գիտակցի յուրաքանչյուրի կարծիքի կարևորությունը, ունենա հանդուրժողական կեցվածք :

Կրթական գործունեության արժեքային համակարգի հիմքում պետք է ամրագրված լինի աշակերտի մեջ կրթության նկատմամբ հարգանքի, նրա դերի և նշանակության կարևորման, ամբողջ կյանքի ընթացքում կրթվելու ցանկության և կարևորության ձևավորումը:

Ազգի հիմքը կրթությունն է. կրթության միջոցով են արժեքները փոխանցվում մարդկանց, տարածվում հասարակության մեջ:

Կրթության միջոցով սովորողները ձեռք են բերում ոչ միայն գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ, այլև դրանց հիման վրա ձևավորում են իրենց հայացքներն ու համոզմունքները, իդեալները, գիտական աշխարհայացքը, ստեղծագործական կարողությունները, բարոյական արժեքներն ու հասարակական վարքը:

Կրթության հենքն ու իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:

Գլուխ 2. «Արժեք» հասկացության մեկնաբանությունը

Մարդու առավել մարդկայնացումն իրականանում է գիտակցված նպատակամղված խորհրդածություն-արժևորումների ընթացքում:

Իսկ ի±նչ է նշանակում արժևորել: Արժևորել նշանակում է արժեք տալ կամ գիտակցել ու հարգել արժեքը, կարևորել այն: Արժեքը ինչ-որ բանի օգտակարությունն է, կարևորությունը, նշանակալից լինելը, առարկային կամ երևույթին մարդու տված գնահատականը:

Անհիշելի ժամանակներից մարդուն զբաղեցրել են իր գոյիմաստի, աշխարհի և բնության հարաբերության, Ճշմարտության ու ստի, բարու և չարի հարցերը, որոնք պատմահասարակական և սոցիալ-մշակութային տարբեր ժամանակաշրջաններում յուրովի են մեկնաբանվել՝ կախված մարդու ազատության և պարտադրանքի հարաբերակցության բնույթից, ընտրության հնարավորությունից, աշխարհի ստեղծագործական ընկալման մակարդակից, բարոյական և գեղագիտական պատկերացումներից: Աշխարհի հանդեպ՝ անհատական ու հասարակական տեսանկյունից իմաստավորված գնահատողական վերաբերմունքը, որը բնորոշ է բանական մարդուն,

պայմանավորում է նրա վարքը, սոցիալական ակտիվությունը, իդեալներն ու բարոյական և պատկերացումները: Աշխարհի արժեքային-իմաստային յուրացման ընթացքում մարդը որոշակի գնահատողական վերաբերմունք է ձևավորել, իմաստավորել իր տեղն ու դերն այդ աշխարհում, արժևորել շրջապատող առարկաները, երևույթներն ու գործընթացներն՝ ըստ հոգևոր և նյութական պահանջմունքների բավարարման:

Արժեքը ինչ-որ բանի օգտակարությունն է, կարևորությունը, նշանակալից լինելը: Այն օբյեկտի այնպիսի հատկությունն է, որը բավարարում է սուբյեկտի պահանջմունքներն ու ցանկությունները: Սակայն օբյեկտի՝ առարկայի, երևույթի առանձին հատկությունը արժեք է դառնում միայն այն դեպքում, երբ կա սուբյեկտը՝ մարդը, որը ճանաչում է այդ հատկությունը, գնահատում և արժևորում է այն: Առարկային կամ երևույթին մարդու տված գնահատականը, արժեքը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Առաջին հերթին այն պայմանավորված է մարդու պահանջմունքներով:

Միևնույն առարկան կամ երևույթը, դրանց առանձին հատկությունները կարող են տարբեր կերպ գնահատվել տարբեր մարդկանց կողմից և ունենալ տարբեր արժեքներ: Յուրաքանչյուր մարդու համար արժեքավոր են այն առարկաները, երևույթները, որոնք կապված են իր հետ: Արժեքավոր են նաև յուրաքանչյուր մարդու ընտանիքի, շրջապատի, ազգի հետ կապված առարկաներն ու երևույթները:

Որոշ առարկաներ կարող են արժեք ունենալ միայն մեկ մարդու համար, մյուսները՝ մարդկանց առանձին խմբերի, հասարակության, ազգի, պետության կամ ողջ մարդկության համար:

Արժեքները մարդու կողմից գնահատվող, կարևորվող իրողություններ են: Դրանք կարող են լինել անցողիկ և անանց: Անցողիկ արժեքներն իրական են, արտահայտում են մարդկանց շահերը: Հավերժական արժեքները կազմում են մարդու մեջ եղած մարդկայինի կորիզը, ամենից կարևորը, որի համար մարդը կարող է հերոսանալ: Երբ մարդու արժեհամակարգում տեղ են գտնում այնպիսի կարևոր արժեքներ, որոնց պահպանման համար նա կարող է զոհաբերել իր բարեկեցությունը կամ նույնիսկ կյանքը, ապա մարդը հերոսական արանք է կատարում:

Արժեքները մեր համոզմունքներն են ցանկալիի, կարևորի կամ նվիրականի, ինչպես նաև վարքագծի ընդունելի չափանիշների մասին /Անդերսոն և Բուրք,

2000/: Մարդկային հասարակությունն արժեքների միջոցով է մշակույթը փոխանցում սերնդեսերունդ:

Արժեքները լինում են նաև նյութական և հոգևոր: Մարդու խորքային էությունն ավելի շատ հոգևոր արժեքներ ունենալու մեջ է: Հոգևոր արժեքներն աշխարհայացքի կարևորագույն բաղադրիչներն են, դրանց միջոցով է մարդը ձևավորում իր վերաբերմունքը թե՛ աշխարհի, թե՛ ինքն իր հանդեպ:

Արժեհամակարգը պատմամշակութային տարբեր ժամանակշրջաններում, սկսած հնագույն ժամանակներից, յուրովի մեկնաբանություններ է ստացել փիլիսոփայական տարբեր ուղղությունների, դպրոցների ներկայացուցիչների ուսմունքներում:

Բարոյական առաքինությունների և հասարակական արժեքների բերաբերյալ պատկերացումներն արտացոլվել են չինական փիլիսոփայության մեջ, մասնավորապես Կոնֆուցիոսի ուսմունքում:Հասարակության, պետության, բարոյականության մասին իր ուսմունքում Կոնֆուցիոսն առաջադրում է մարդասիրության՝ Ժենի համակարգը՝ որպես կատարյալ մարդու հիմնական բարոյական առաքինություն, մարդու բարոյական կատարելագործման նպատակ: Բարոյական առաքինությունները՝ մարդասիրությունը, արդարությունը, ավանդույթների պահպանումը, վարքի նորմերը, հարգանքը ծնողների ու մեծահասակների նկատմամբ, առողջ բանականությունը, խելամտությունը, իմաստնությունը, անկեղծությունը, բարյացակամությունը. Պարտքի զգացումը, հավատարմությունը, որոնք Կոնֆուցիոսի մարդասիրական համակարգի հիմքերն են, նաև հասարակական-նորմատիվային կարգավորիչներ են:

Անտիկ շրջանում բարձրագույն արժեք է հռչակվել համակողմանի զարգացած մարդու գաղափարը: Պլատոնը, դիտարկելով պետականության և հոգու դաստիարակության հարցերը, շոշափում է բարօրության գաղափարը՝ որպես բարձրագույն արժեք. «Բարօրության գաղափարն ամենակարևորն է, որի միջոցով օգտակար և պիտանի են դառնում արդարությունը և մնացած ամեն բան»:

14-16-րդ դարերում եվրոպական Վերածնունդը արմատական հեղաշրջում բերեց աշխարհակառուցվածքում, տիեզերքի, կրոնի, բարոյականության, հասարակության, մարդու, աշխարհում մարդու տեղի ու դերի մասին ունեցած պատկերացումներում: Միջնադարյան պահպանողական աշխարհընկալմանը հակադրվեց մարդու և մարդկայինի պաշտամունքը՝ հումանիզմը: Բարձրագույն արժեք հռչակվեց մարդը: Համակողմանի զարգացած մարդու մասին պատկերացումը ստացավ սոցիալական և փիլիսոփայական վառ գունավորում:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Քրիստոնեականը ասում է. «… ծնողները պարտավոր են հոգալ իրենց զավակների և՛ մարմնավոր, և՛ հոգևոր պետքերը»: Ծնողները հոգում են իրենց զավակների ապրուստը, մայրենի լեզուն սովորեցնում, ազգային արժեքներ փոխանցում:

Ներսես Շնորհալին խորհուրդ էր տալիս երեխաներին դաստիարակել դեռ շատ վաղ մանկության օրերից, խրատել ու նրանց սրտի մեջ մտցնել <<բարություն>>, «ազնվություն» ու «մարդասիրություն»:

Մծիթար Գոշը, որը խաղաղություն էր քարոզում, դաստիարակներից պահանջում էր դեռ փոքր հասակից երեխաներին սովորեցնել «բարեգործություն, ուրիշին հարգելու, սիրելու շնորհք»:

Ամեն մի ժողովրդի կյանքում դաստիարակության խարիսխը, մարդկային բանականության հաստատման համար միակ ճշմարիտ ճանապարհը այնպիսի քաղաքացու ձևավորումն է, որն իր մեջ կկրի իր իսկ ազգին հարիր, իր նախնիներից ժառանգած ազգային արժեքները:

Ինչպիսի՞ն է ժամանակակից սերունդը, ի՞նչ պահանջմունքներ, հետաքրքրություններ ունի, ինչպիսի՞ արժեհամակարգով է առաջնորդվում: Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր սերունդ ունի իր կատարելատիպը, ըստ որի էլ չափվում են արժեքներն ու նպատակները: Սերունդներն օղակ են անցյալի ու ապագայի միջև և ապահովում են ինչպես տվյալ ժամանակաշրջանին բնորոշ արժեքների հաջորդականությունը, այնպես էլ՝ փոփոխումը:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են

հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը ,հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ, տեղեկատվական աղբյուրներից հոսող հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից» [4, էջ 22]:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից, աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության

ձևավորումն է: Երեխաների արժեքների ձևավորման վրա մեծ ազդեցություն ունի գեղագիտական դաստիարակությունը: Գեղեցիկի և բարու փոխհարաբերությունները և համապատասխան արժեքների ձևավորման խնդիրները եղել են բոլոր ժամանակների հետազոտողների ուշադրության կենտրոնում: Որոշ հետազոտողներ հակված են գեղագիտական դաստիարակությունը ներառել բարոյական դաստիարակության մեջ: Հայտնվում է նաև տեսակետ, ըստ որի գեղեցիկը ծառայում է որպես բարոյական դաստիարակվածության մակարդակ: Գեղագիտական դաստիարակության շնորհիվ հնարավոր է դառնում նաև անձի հոգևոր աշխարհի գեղագիտական, բարոյական և ինտելեկտուալ բաղադրիչների միջև լիակատար ներդաշնակության հաստատումը:
Անձի արժեքները, հիմնականում, ձևավորվում են մանուկ հասակից: Ճիշտ վարվելու մասին պատկերացումներն ու խոսելու հմտությունները ձևավորվում են ծնողների, ընտանիքի այլ անդամների միջոցով: Զարգացման հետ զուգընթաց երեխայի արժեքային համակարգի ձևավորման վրա իրենց ազդեցությունն են թողնում ընկերները ուսուցիչները և այլոք. ընդլայնվում է արժեքների յուրացման ու ձևավորման շրջանակը, երեխան սկսում է ընտրողաբար կառուցել սեփական արժեքային համակարգը և համադրել այն հասարակական արժեհամակարգի հետ:

Մարդու ինքնությունը ձևավորվում է արժեքների և կողմնորոշիչների այն համակարգում, որին դավանում է տվյալ մշակույթը, որի մեջ մեծանում ձևավորվում է տվյալ անհատը: Մարդու ինքնության ձևավորման վրա մեծ ազդեցություն է ունենում սոցիալական, մշակութային ավանդույթը, որն ամեն մի նոր սերնդի ներկայացուցչի վերագրում է իր դերը՝ կանխանշելով այդ դերին բնորոշ հատկանիշներն ու վարվելակերպերը: Սակայն գլոբալացման դարաշրջանում տեղի են ունենում մի շարք փոփոխություններ, որոնց հետևանքով սոցիալական փորձի փոխանցման մեխանիզմները խախտվում են: Հետևաբարար արժեքների և կողմնորոշիչների համակարգը փոխանցում են ոչ թե տվյալ մշակույթի ծնողները, այլև հեռուստատեսությունը, համացանցը, մամուլը: Եվ եթե տվյալ հասարակության մեջ ինչ-որ երևույթ կարող է անընդունելի լինել, սակայն արդեն փոփոխվող ինքնություն ունեցողի համար այն կարող է լիովին ընդունելի լինել: Գլոբալացման հետևանքով մեզ վրա թափվող տեղեկատվական հոսքը հնարավորություն չի տալիս մարդուն խորհել ու ամբողջացնել իր աշխարհայացքը,

ունենալ կայուն պատասխաններ կյանքի տարբեր իրավիճակների համար: Մարդը դառնում է անկայուն և կարող է հեշտությամբ ենթարկվել տարբեր արտաքին ազդեցությունների: Ուստի և՛ ընտանիքի, և՛դպրոցի դերը մեծ է երեխային ճիշտ արժեքներ ներկայացնելու հարցում:

Արժեհամակարգի ձևավորումը օտար լեզվի դասերին

Բարոյական բարձր արժեհամակարգ ունեցող անհատի ու լիարժեք քաղաքացու ձևավորման կարևորագույն օջախներից մեկը դպրոցն է: Դպրոցն այն վայրն է, որտեղ աշակերտները մարդկության կերտած բարձր արժեքների կրողներն են դառնում: Երեխաների մեջ ազգային և համաշխարհային արժեքների ձևավորումն ու զարգացումը նախադրյալ է դառնում ապագա հասարակության հոգևոր մշակույթի ձևավորման համար:

Դեռահասության տարիքում ձևավորվում է մարդու աշխարհընկալման, աշխարհայացքի և, առհասարակ, առաջնային արժեքների համակարգը: Դեռահասը վաղվա արժեքների կրողն է, ուստի կարևոր է նրան ներարկել առողջ արժեքներ, ապագայի հասարակության համար պատրաստել հայրենասեր, քաղաքակիրթ քաղաքացիներ: Այս գործը մեծամասամբ իր վրա պետք է վերցնի դպրոցը:

Արժեքները երեխաներին ներկայացվում են առաջին հերթին գրական,պատմական հերոսների օրինակով, նաև ուսուցչի վարքագծով:Ուստի շատ կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել դասագրքերի նյութերին,ինչպես նաև ներկայացված հերոսների վարքագծի վերլուծությանը և դրա միջոցով որոշակի արժեքների բացահայտմանը:Սակայն վերլուծությունը ենթադրում է առաջին հերթին երեխաների գործուն մասնակցություն,այսինքն՝աշակերտները պետք է հնարավորություն ունենան ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը,զգացմունքները, որոշակի հարցադրումներ անելու,ընկերների հետ քննարկելու,դատողություններ անելու հերոսների վարքագծի մասին,գնահատելու և իրենց համար բացահայտելու այս կամ այն արժեքը: Օրինակ՝ գերմաներենի դասին, ուսումնասիրելով գերմանացի մեծ նկարիչ Ա. Դյուրերի մասին «Իսկական ընկերությունը» տեքստը, աշակերտները բացահայտում են, թե ինչպիսին կարող է լինել իսկական ընկերությունը: Առնչվում են այնպիսի կարևորագույն արժեքների հետ, ինչպիսին են անձնազոհությունը, նվիրվածությունը, ընկերասիրությունը, հավատարմությունը:

8-րդ դասարանում գերմաներենի դասին, ուսումնասիրելով Հայաստանի պատմության կարևորագույն դրվագները, Ավարայրի ճակատամարտը, Սարդարապատի ճակատամարտը, «Սասունցի Դավիթ էպոսը», քրիստոնեության ընդունումը, գրերի գյուտը, աշխատում եմ աշակերտների մեջ սեր, հպարտության զգացում և պատասխանատվություն ներարկել սեփական երկրի՝ Հայաստանի, նրա անցյալի և ապագայի նկատմամբ, նրանց հոգում վառել հայրենասիրության կրակը՝ մեր հերոսների, նրանց գործողությունների, անձնազոհության ու հայրենանվիրության բացահայտումներով: Տեղեկություններ տրամադրելով հայրենիքի, նրա մայրաքաղաքի, քաղաքների, տեսարժան վայրերի, մարդկանց մասին՝ օգնում եմ աշակերտներին ճանաչել, սիրել ու գնահատել սեփական երկրի պատմամշակութային արժեքները:

Մյուս կարևոր սկզբունքն այն է, որ արժեքը պետք է սովորել ոչ թե լսելով, այլ կիրառելով: Աշակերտների արժեքային կողմնորոշիչները չեն կարող արդյունավետ լինել, եթե նրանք չեն գիտակցում, թե ինչու են այդ արժեքները կարևոր: Արդյունքում հնարավոր է , որ սովորողը խոսի հայրենասիրության մասին, բայց իր գործելակերպով չառաջնորդվի այդ արժեքով:Ուստի պետք է նրանց հնարավորություն տալ կիրառելու իրենց սովորած արժեքը,այն ձեռք բերել իրենց իսկ փորձառության հիման վրա:

Լեզվաբանական կրթության և, առհասարակ, օտար լեզվի ուսուցման ժամանակակից միտումները ցույց են տալիս, որ օտար լեզվի յուրաքանչյուր դաս մշակույթների խաչմերուկ է, միջմշակութային հաղորդակցության գործնական իրավիճակ, քանի որ յուրաքանչյուր օտար բառ արտահայտում է օտար մշակույթ և օտար աշխարհ աշխարհի ազգային մշակույթով պայմանավորված պատկերացում: Լեզվական փաստերի և երևույթների լիարժեք, ճշգրիտ ընկալումը և կիրառումը միջմշակութային հաղորդակցության գործընթացում անհնար է առանց ուսումնասիրվող օտար լեզվի ազգագրական, պատմական, մշակութային և այլ տվյալների իմացության, քանի որ յուրաքանչյուր լեզվում արտացոլվում են այն ժողովրդի մշակութային առանձնահատկությունները, ով խոսում է այդ լեզվով: Այդ պատճառով շատ լեզվաբան–մեթոդիստներ գալիս են այն կարծիքի, որ անհրաժեշտ է սովորողներին հաղորդակից դարձնել օտար լեզվին ոչ միայն որպես հաղորդակցման միջոց, այլ նաև որպես այլ ազգային մշակույթի ճանաչման միջոց: Մարդը չի կարող գոյություն ունենալ չեզոք, առանց մարդկանց հետ անընդհատ շփման:

Լեզուն մշակույթի գանձարանն է, այն պահպանում է մշակութային արժեքները բառապաշարի, քերականության, ասացվածքների, դարձվածքների, բանահյուսության, գեղարվեստական և գիտական գրականության մեջ, գրավոր և բանավոր խոսքում: Լեզուն մշակույթի կրողն է և փոխանցողը, այն փոխանցում է սերնդեսերունդ ազգային մշակույթի արժեքները: Լեզուն մշակույթի գործիքն է: Այն ժողովրդի մշակույթի միջոցով ձևավորում է մարդու անձը՝ այլ լեզվի կրողին: Այսպիսով՝ լեզուն գոյություն չունի առանց մշակույթի՝ որպես հասարակության կողմից ժառանգած գործնական ունակությունների և գաղափարների ամբողջություն: Լեզուն, լինելով մարդկային գործունեության ձևերից մեկը, մշակույթի բաղկացուցիչ մասն է, մարդկային կյանքի տարբեր ոլորտներում՝ արտադրողական, հասարակական, հոգևոր, մարդկային գործունեության արդյունքների ամբողջություն: Սակայն որպես մտածողության գոյության ձև և շփման միջոց՝ լեզուն մշակույթի հետ մի շարքի վրա է: Իսկ եթե դիտարկենք լեզուն նրա կառուցվածքի, գործելու և յուրացման տեսակետից (ինչպես՝ մայրենի, այնպես էլ՝ օտար), ապա հասարակամշակութային շերտը կամ մշակույթի բաղադրիչը լեզվի մի մասն է: Լեզուն հասարակական հզոր զենք է, որը փոխակերպում է մարդկանց ամբոխը որոշակի ազգերի, ստեղծում է ազգը՝ պահպանելով և փոխանցելով տվյալ խոսքային կոլեկտիվի մշակույթը, ավանդույթները, ազգային ինքնագիտակցումը:

Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը սահմանում է. «Օտար լեզուն ոչ հայախոս անձանց հետ շփվելու հիմնական, այլ երկրների ու ժողովուրդների քաղաքակրթությանն ու մշակույթին հաղորդակցվելու, դրանց լավագույն արժեքները յուրացնելու և հայերենով արտահայտելու, ինչպես նաև հայալեզու մշակույթը այլ ժողովուրդներին մատչելի դարձնելու լրացուցիչ միջոց է»:

Նշելով, որ օտար լեզուների իմացությունը նպաստում է անձի հաղորդակցական կարողությունների զարգացմանը, միջմշակութային փոխըմբռնմանը, այլ մշակույթների ու արժեքների ընկալմանն ու գնահատմանը, բնության ու ժամանակակից աշխարհի մասին առավել ամբողջական գիտելիքներ ստանալուն, գեղագիտական, բարոյական, սոցիալական, համամարդկային և ազգային արժեքների գիտակցմանը, պահպանմանը և փոխանցմանը, միջնակարգ կրթության չափորոշիչը սահմանում է հանրակրթական դպրոցում օտար լեզուների ուսուցման հիմնական նպատակը, այն է՝ ընդլայնել սովորողի հաղորդակցվելու և համագործակցելու կարողությունները:

Այսօր օտար լեզուների դասավանդման ժամանակակից տեսության ու պրակտիկայի առջև դրված խնդիրներն են՝ սովորողների հոգևոր ոլորտի զարգացում, ուսուցման հումանիտար բովանդակության գերակայություն, ուսումնական առարկայի դաստիարակչական ներուժի առավել ամբողջական իրագործում՝ հաշվի առնելով յուրաքանչյուր աշակերտի անհատականությունն ու ներուժը:

Գլուխ 4. Օտար լեզուների դասավանդման արժեքային համակարգը

Օտար լեզուն, լինելով իր լեզվակիր ժողովրդի մշակույթի էական տարր և այլ ժողովուրդներին այդ մշակույթը փոխանցելու միջոց, նպաստում է աշխարհի ամբողջական պատկերի ձևավորմանը, ժողովուրդների փոխըմբռնմանը և միջմշակութային դրական հարաբերությունների ամրապնդմանն ու փոխհարստացմանը: Օտար լեզուներին տիրապետելը նպաստում է անհատականության ձևավորմանն ու սոցիալացմանը բազմամշակութային ու բազմալեզու աշխարհի հարափոփոխ պայմաններում:

Օտար լեզուն նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը, զարգացնում նրանց ճանաչողական կարողությունները, խոսքն ու մտածողությունը:

Օտար լեզուներն ընդլայնում են սովորողի աշխարհայացքը, նպաստում են հաղորդակցական և հանրամշակութային կարողությունների ձևավորմանը:

Հանրակրթական դպրոցում ուսուցանվող ցանկացած ուսումնական բնագավառ սովորողի արժեհամակարգի ձևավորման գործընթացում մեծ դեր ունի: Հանրակրթական դպրոցի բոլոր աստիճաններում արժեքային համակարգի ձևավորումը օրենսդրական պահանջ է, մասնավորապես՝ «Օտար լեզուներ» ուսումնական բնագավառի պահանջն է՝ տարրական դպրոցում օտար լեզվի ուսումնասիրման շնորհիվ սովորողը պետք է՝

- հարգի և սիրի գիրքը, հասկանա դրա կարևորությունը ինքնուսուցման հարցում.
- գիտակցի օտար լեզվի՝ որպես տեղեկատվություն ստանալու գործոնի դերն ու կարևորությունը.
- կարևորի մեր օրերում օտար լեզվի ուսումնասիրության անհրաժեշտությունը և դրա կիրառումը որպես հաղորդակցման, ճանաչման, ինքնադրսևորման միջոց.

- պատկերացում ունենա տվյալ լեզուն ներկայացնող ժողովրդի և երկրի մասին.
- Հետաքրքրություն դրսևորի այլ երկրներում իր հասակակիցների կյանքի և սովորույթների նկատմամբ, գիտակցի տարբերությունները և հարգի դրանք:

Միջին դպրոցում օտար լեզվի ուսումնասիրման շնորհիվ սովորողը պետք է՝

- Գիտակցի և արժևորի օտար լեզուների՝ որպես միջանձնային և միջմշակութային հաղորդակցության միջոցի դերը.
- ծանոթ լինի և հարգանք դրսևորի տվյալ օտար լեզուն ներկայացնող ժողովրդի մշակույթի նկատմամբ.
- ճանաչի և ուսումնասիրի իր սեփական և այլ երկրների ու ազգերի մշակութային ժառանգությունը, սովորի հարգել դրանք
- իր հասակակիցների հետ հաղորդակցության, համագործակցության կարևորություն դրսևորի, լինի հանդուրժող, հարգի ուրիշի կարծիքը և սկզբունքները.
- գիտակցի իր և այլ ժողովուրդների լեզվական ու մշակութային նմանություններն ու տարբերությունները, գնահատի ու արժևորի դրանք, հանդուրժող լինի տարբերությունների նկատմամբ:

Ավագ դպրոցում օտար լեզվի ուսումնասիրման շնորհիվ սովորողը պետք է՝

- գիտակցի համամարդկային և ազգային մշակութային արժեքների ստեղծման դերը, ձգտի այդ արժեքներն ընկալել, պահպանել, կատարելագործել և փոխանցել սերունդներին.
- գիտակցի օտար լեզվի իմացության կարևորությունը ուսման, ինքնակրթության և ինքնակատարելագործման մեջ,ձգտի հարստացնելու իր իմացությունը
- գնահատի տվյալ օտար լեզուն կրող ժողովրդի արժեքներն ու ավանդույթները.
- զարգացնի համագործակցության կարևորությունը, հարգի դիմացինի արժանապատվությունը և ինքնությունը, հանդուրժողականություն սերմանի, ունենա նրբանկատ, հարգալից վերաբերմունք ուրիշի տեսակետի նկատմամբ:

Գլուխ 5.ժամանակակից ուսուցչի անձի ձևավորումը

Ժամանակակից կրթական համակարգում առաջնահերթ խնդիր է նոր դարաշրջանի ուսուցչի կերպարի ստեղծումը: Ուսուցչի գործունեությունը բարդ, աշխատատար և պատասխանատու գործ է: Նրա դերը չափազանց կարևորվում է հատկապես հասարակության մեջ բարեփոխումների իրականացման գործընթացում՝ պահանջվող գիտելիքների և արժեքների փոխանցման առումով: Բացի մասնագիտական կարևորություններից, կարևոր են նաև ուսուցչի բարոյական, անձնային որակները՝ որպես ուսուցչի մասնագիտական վարպետության անքակտելի բաղադրիչ: Որն էլ համարվում է ուսումնական գործընթացի արդյունավետության երաշխիքներից:

Ուսուցիչն ունի իր ուսերին դրված առաքելություն՝ այն է կրթելու և դաստիարակելու հայրենիքին և պետությանը արժանի, պատվախնդիր, բարոյական, ազգային և ավանդական արժեքները համամարդկային արժեքների համադրմամբ առաջնային և բարձր պահող անհատներ: Ուսուցիչը երեխային պիտի քարոզի այնպիսի արժեքներ, որոնց ինքն անձամբ հավատում է: Ուսուցիչները պետք է գնահատեն, թե որքանով են աշակերտները դրսևորում ամենակարևոր արժեքներն ու վերաբերմունքը: Նման համամարդկային արժեքներ են.

- Ազնվությունը: Աշակերտները ուրիշների հետ իրենց հարաբերություններում պետք է սովորեն գնահատել ազնվությունը:
- Կայունությունը: Աշակերտները պետք է հավատարիմ մնան, ասենք, բարոյական և գեղագիտական արժեքների՝ իրենց սեփական համակարգին:
- Արդարությունը: Աշակերտները պետք է որդեգրեն այն տեսակետը, սկզբունքը, որ բոլոր քաղաքացիների նկատմամբ պետք է հավասար արդարություն կիրառվի:
- Ազատությունը: Աշակերտները պետք է հավաատան, որ ժողովրդական կառավարությունը պետք է առավելագույն ազատություններ ապահովի իր քաղաքացիների համար, իսկ քաղաքացիներն իրենց հերթին պետք է ազատ լինելու կարողություն մշակեն իրենց մեջ:
- Պատասխանատվությունը: Աշակերտները պետք է հասկանան, որ պատասխանատվությունը ազատության մյուս կողմն է, առանց որի ազատությունը պարապ ձայն է: Նրանք պետք է կատարեն իրենց պարտավորությունները:

Ուսուցչի մանկավարժական վարպետությունն ու հմտությունները առավել կարևորվում են ան պատճառով, որ նրա սոցիալական կարևորագույն գործառույթը

աճող սերնդին՝ մշակութային ժառանգությանն ու սերունդների փորձին հաղորդակից դարձնելն է:Այդ պատճառով ուսուցչի անձը դառնում է սովորողի անձի ձևավորման հզոր գործոն:Այսինքն ուսուցչի դիրքորոշումները, աշխարհայացքը, արժեհամակարգը, վարքագիծը, ճաշակը դառնում են աշակերտի անձի ձևավորման որոշիչ գործոն:

Մանկավարժական կրթության կենտրոնում ուսուցչի անձի ձևավորումն է. բարձրակարգ կրթության, համամշակութային արժեքների, հոգևոր և բարոյական որակների կրող, որն ընդունակ է սովորեցնել և դաստիարակել երիտասարդներին 21- րդ դարի պահանջներին համապատասխան (Եվրոպայի մանկավարժական սահմանադրություն, էջ 19): Համաշխարհային և եվրոպական հանրությունը և, մասնավորապես, Եվրոպայի մանկավարժական սահմանադրությունը 21-րդ դարի նոր ուսուցչի պատրաստման համար ենթադրում է միասնական արժեքային և մեթոդաբանական հիմք: Փաստաթուղթն արտացոլում է մանկավարժական կրթության հիմնական կողմերը. զարգացման խնդիրներն ու սկզբունքները, բովանդակությունը, պայմանները, ակնկալվող արդյունքները, արժեքները: Համամարդկային արժեքներից առաջնային են. հումանացումը, անձնակենտրոնությունը, հանդուրժողականությունը, էկոլոգիական անվտանգությունը, ժողովրդավարությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը, սոցիալական համերաշխությունը: Վերոհիշյալ արժեքային համակարգի հիման վրա պատրաստված նոր ուսուցիչը պետք է ընդունակ լինի հաղթահարել մարդկանց որպես թշնամի ընկալելու կաղապարը, հանդուրժողականություն, հավասարակշռություն և խաղաղասիրություն ձևավորել, հիմնավորել էկոլոգիական աշխարհայացքը, գիտակցել ժողովրդավարական արժեքների նշանակությունը, մարդու իրավունքների նկատմամբ հարգանք դաստիարակել:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ դեռահասների բարոյական արժեքների ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Եզրակացություն

Աշխարհն իր ամբողջության մեջ արժեքների համակարգ է, որը գնահատվում է բարու և չարի, ճշմարտի և ստի, գեղեցիկի և տգեղի, վեհի և ստորի, արդարի և անարդարի, ընդունելիի և մերժելիի տեսանկյունից: Չնայած պատմամշակութային յուրաքանչյուր ժամանակաշրջան իր կնիքն է դնում արժեքային ընտրության և դիրքորոշման վրա, այնուհանդերձ գոյություն ունեն համամարդկային անանց արժեքներ, որոնք կարգավորում են համայն մարդկության կենսագործունեությունը՝ որպես համընդհանուր նորմեր, չափանիշներ, բարոյական-արժեքային կողմնորոշիչներ:

Շատ կարևոր է, որ այսօր մարդը կրթության միջոցով ձեռք բերի որոշակի արժեքներ և հմտություններ, որոնք նրան հնարավորություն կտան տարբեր մշակույթների հետ շփվելիս և տարբեր մշակութային միջավայրերում հայտնվելիս և՛ պահպանել սեփական ինքնությունը, և՛ ձեռք բերել մյուս մշակույթին բնորոշ, բայց իր համար ցանկալի արժեքներն ու նորմերը:

Միջմշակութային շփումներում ցանկալի արդյունքի հասնելու կարևորագույն դիրքորոշումը հանդուրժողականությունն է, որը հնարավորություն կտա խելամիտ վերլուծության շնորհիվ պահպանել սեփական մշակույթի ինքնության արժեքավոր տարրերը և ընդունել այլ մշակույթների ցանկալի արժեքները, նորմերն ու մոտեցումները:

Օգտագործված գրականության ցանկ

1.Քրիստոնեական, «Գանձասար» մատենաշար, Երևան, 1994, էջ 34
2.Ա. Խ. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (X-XV), Հայպետուսմանկհրատ, Երևան, 1958, էջ 458-459
3.«Մանկավարժություն» գիտամեթոդական ամսագիր N 5 էջ 31
4.«Մարդ և հասարկություն», գիտամեթոդական վերլուծական ամսագիր 5-6. 2007
5.«Մարդ և հասարկություն», գիտամեթոդական վերլուծական ամսագիր 5,6 2013
6.ՀՀ Սահմանադրություն, 1995թ.
7.Գերմաներեն լեզու,Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, 2007
8.«Հասարակագիտություն» 10-րդ դասարան, Ս. Պետրոսյան, Ս. Խաչատրյան, Երևան 2021
9.«Հասարակագիտություն» 12-րդ դասարան, Ս Պետրոսյան, Ս. Խաչատրյան, Երևան 2016
10.«Էկոլոգիական կրթության կառավարման հիմունքները», Լ. Թ. Ասատրյան, Երևան 2006